

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներկայ համարում ղետեղւած առաջնորդող խօրհանքին կը լաջորդէ մի ալ խօրհանք՝ մարտի համարում—«Մուրճ» ամսագիրը, որպէս գրական օրգան—վերնադրով, որտեղ իրանց անդը պիտի բռնեն «Կռուճկ Հայոց Աշխարհի» և «Փորճ» ամսագիրները, Մարկոս Աղաբէկեան և Արդար Յովհաննիսեան:

Ամսագրիս «Մուրճ» վերնադրի ղեղարկատական նկարը պատկանում է մեր աշխատակից նկարիչ պ. Գ. Բաշինջաղեանի վրձինին, իսկ նկարը պղնձի վերաւ փորագրել է պ. Իլիա Մատթոսովիչ, որին, սակայն հարկաւոր կը լինի դեռ ևս կլիշէն նրբացնել՝ նկարչի օրինակն աւելի հաւատարիմ կերպով արտագրելու համար:

«Մուրճ»-ի աչս առաջին համարը դուրս է գալիս ոչ իւր իսկական երեսի թղթով: Մեր ամսագրի իսկական երեսի թուղթը շատ բաց կանաչ գոյն ունի և պատէր էր տրւած պ. Տիգրան Նազարեանցի մօտ: Բայց, դժբաղդաբար, անդ թուղթը չը ստացանց Մօսկւայի Վարդուհի թղթագործարանից: Բանից երևեց, որ մեզ համար պատուիրած թուղթը նոյն ալիքներին է գոհ գնացած, որպէս և «Աղբիւր»ի թուղթը, որի մասին անդ ամսագրի անս տարւալ առաջին համարից տեղեկանում ենք, թէ Սև ծովի ալէկոծութեան մատնեց:

ՓՈՒԱՏՈՒ-ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ:

«Մուրճ» ամսագիրը հրատարակելու թուղտութիւն ստանալուն պէս, մենք, որպէս նորա խմբագիր-հրատարակիչ, մշակեցինք մի «Ներքին Կանոնադրութիւն», որոշելու համար մեր լարաբերութիւնները դէպի «Մուրճ»-ի խմբագրութեան ծառայողները և ամսագրի ամեն կարգի աշխատակիցները:

Նա բաղկացած է լողածներին՝ իրաւունքների և պարտականութիւնների վերաբերեալ, և նոքա ընդհանուրի գիտութեան համար չեն նշանակած, ալ միմիայն «Մուրճ»-ի գործակիցների համար:

Բայց այդ կանոնադրութեան մէջ կալ մի լողած, որի հետ կարևոր ենք համարում ծանօթացնել հաւ ընթերցող հասարակութեան առհասարակ և զրոյզ դասակարգին մասնաւորապէս: Այդ լողածով «Մուրճ»-ի խմբագրութիւնը հաստատում է մի փոխատու-խնայողական Գանձարան, որին պարտաւորիչ կերպով մասնակցում են բոլոր ալն անձները, որոնք որ և է վարձատրութիւն են ստանում «Մուրճ» ամսագրի խմբագրութիւնից: Մասնակցութիւնը կաշանում է նորանում, որ խմբագրութիւնը ո՛ւմ ինչ գումար էլ տալու լինի, նորա 4% վտ է պահում. ալդ ստացած գումարները գրւում են մեծ մասեանի մէջ՝ նոցա տէրերի հաշւի, խնայողութեան ընդհանուր գումարը կը լինի 100 բուրլի, երբ խմբագրութիւնը իւր աշխատակիցներին տւած կը լինի 2,500 բ. խնայողութիւնը հասած կը լինի 1000 բուրլու, երբ ժամանակով «Մուրճ»-ը իւր հիմնադրութեան օրից, իւր աշխատակիցներին տւած կը լինի 25,000 բուրլի, և ալն:

Խնայած գումարի չափով, «Մուրճ»-ի խմբագրութիւնը կը տալ փոխատուութիւն գանձարանին մասնակից անձներին. բայց թէ ինչ կանոններով, ալդ դեռ ևս չէ որոշած: Երբ գումարը կը հասնի մի որոշ մեծութեան, ալն ժամանակ գանձարանի կանոնադրութիւնը կը մշակի ընդհանուր ժողովի միջոցով, իսկ առժամանակ խնայած գումարի գործադրութեան մասին կարգադրելը վերապահում է «Մուրճ»-ի խմբագիր-հրատարակչին, որը, սակաւն, ալդ գումարը կը բանեցնի միմիայն փոխատուութեան դիմողներին և պատասխանատու է գումարների անկորուստ պահպանութեան՝ գանձարանին մասնակցողների առջև:

Սորանով «Մուրճ»-ի խմբագրութիւնը գէթ մասամբ իրականացնում է հաւ գրողների ընդհանուր փոխատու-խնայողական ընկերութեան գաղափարը, որը նոր չէ զղանում մեր կրթած դասի մէջ և բաձախ խօսակցութեան առարկալ է եղած մասնաւոր շրջաններում, բայց, որքան մենք գիտենք, երբէք ոչ շատ լուրջ կերպով: Շատ կարելի է, որ ալդ ընդհանուր ընկերութիւնը դեռ ևս չուտով չ'իրագործւի, բայց որ «Մուրճ»-ի փոխատու-խնայողական Գանձարանը ալդ ընդհանուր գաղափարը իրականացնելուն պիտի նպաստէ, դորա մասին չենք կասկածում: Մանաւանդ, եթէ մեր միւս բոլոր խմբագրութիւնները ալ օրինակին հետեւն և մի քանի տարի գործեն, ալն ժամանակ գործը ընդհանրացնելը կը լինի հեշտ լուծելու խնդիր: Ալն ջերմ համակրութիւնը, որ մեր թէ մօտաւոր և թէ հեռավոր աշխատակիցներից չալոնում են մեղինից առաջին անգամ զրացած և առաջին անգամ իրագործած գաղափարին մեղ չուս ևն տալիս, որ նա արձագանք կը գտնէ նաև մեր միւս խմբագրութիւնների կողմից և նոքա օր առաջ կը շտապեն օգտուել «Մուրճ»-ի օրինակից:

Այս տողերով «Մուրճ»-ի խմբագրութիւնը հրաւիրում է բոլորի ուշադրութիւնը իւր այս օգտակար հիմնարկութեան վերաջ և լարտնում է, որ օգուտ ալդ գանձարանի ընդունւում են նւէրներ մեծ շնորհակալութեամբ: Այդ նւէրները կարող են լինել թէ՛ մեծ և թէ՛ ամենափոքր գումարներ: Առաջիմ ստացած ենք նւէր հինգ բուբլի: Նւիրատունների անունները կը լարարարենք սլարբերարար:

«ՄՈՒՐՃ», ԱՄՍԱԳՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

Մեր աշխատակիցներին հաբկատր ենք համարում տեղեկացնել, որ հապկան ուղղագրութեան վիճելի խնդիրներից մի քանիսի նկատմամբ, «Մուրճ»-ը հետեւելու է այս կանոններին: Մենք բոլորովին աւելորդ և անօգուտ ենք համարում կրատական բաբրի վերջատրութիւնները վնդով (ո) սկսել, ինչպէս ալդ մեղանում ընդհանուր սովորութիւն է, օրինակ՝ ասուել, տրուել, գանդատուել: Մենք գրելու ենք ալսպէս՝ ասուել, տրուել, գանդատուել, չարչարուել և ալլն:—Նոյնը պէտք է անենք նաև կարճ բաբրի հետ՝ կուել, տրուել և ալլն, որովհետև նոցա սկզբնական ձևերը՝ կու, տալ և ալլն վո (ո) տառը չունին:

Բայց ոչ ամեն տեղ, որտեղ վո՛ւր (ո) չէ հնչում, մենք պիտի քննենք ալդ տառը: մենք կը պահպանենք վո՛ւր (ո) այն խօսքերում, որոնց մէջ ալդ տառը արմատի մէջն է. օրինակ՝ լեզու, սեռականը պէտք է դեննք լեզուի և ոչ լեզւի. լեզուարանական և ոչ՝ լեզարանական: Անուն—անուանել և ոչ անւանել, անուան և ոչ անւան: Աստուած և ոչ Ատուած, որովհետև երկու դէպքերումն էլ թէև հնչիւնը միևնոյնն է, բայց առաջին, ուրեմն աւանդական ձևը ունի այս առաւելութիւնը, որ առանձին բացատրութեան տեղիք չէ տալիս, թէ ինչո՞ւ նոյն բառի սեռականը գրուում է՝ Աստուծոյ (Առարկել դորան, թէ Արարատեան աշխարհի ժողովուրդը ասում է Աստրծու և ոչ Աստուծոյ—կշիւ չունէ. մեր գրական լեզուն ամեն դէպքում չէ հետևում Աշտարակի և նորա մօտ եղած գիւղերի արտասանութեան): Նոյնպէս առանձին բացատրութեան տեղիք չկալ բացատրելու, թէ ինչու անուան՝ սեռականն է անուն խօսքի, անուանել՝ բալն է անուն գոպականի. մինչդեռ չիտթութիւն կը լարուցանէինք երեխաների գլխում, եթէ մի տեղ վո՛ւր գրենք, իսկ միւս տեղ՝ նորան դուրս գցենք: Եւ վերջապէս անուն խօսքի սեռականը նաև անունի է: Վո՛ւր (ո) սլահպանւում է ուրեմն հետեւեալ բառերում և նոցա բոլոր ձևակերպութիւնների մէջ—Աստուած, լեզու, անուն, արտասուք (արտասուալից) և ալլն, որպէս նաև այն դէպքերում, որտեղ (ու) բարդ ձայնատրը չի կրճատուում—վերարկու-ի, բու-ի և ալլն: Բայց գիր, գրութիւն, գր-

ւածք և ոչ գրուածք, որովհետև ութիւնը (գրութիւն խօսքի մէջ) վերջաւորութիւն է և վոյ (ո) չկալ արմատի մէջ:

Հաշիւ—հաշիւ և ոչ հաշուի:

Յօդւած և ոչ թէ չօդուած, որովհետև ոչ մի դէպքում վոյը իրան դրացնել չէ տալիս. նա կաղմւած է չօդ—չօդել բառից:

Լւանալ, լւացք և ոչ լուանալ, լուացք, որովհետև ոչ մի փոփոխութեան մէջ ոչ չէ լստամ, ուրեմն նա բոլորովին աւելորդ է:

Ազնիւ—ազնւանալ, ազնւաբարոյ. զգւել—զգւանք, որովհետև վոյը (ո) ոչ մի ձևակերպութեան մէջ չէ լստանում. նա աւելորդ է և նորա չը լինելը ոչ մի խնդիր չէ բարդում:

Մենք կարծում ենք, որ վերը փշած օրինակներով և բացատրութիւններով մեր ուղղագրութեան կանոնը բոլորովին պարզած ենք, որ ինչ վերաբերում է հիւն (ւ) տառի գործածութեան, փոխանակ ու բարդ ձայնաւորի Մնում է մեզ հիւն (ւ) տառի մասին աւելացնել աչն, որ հիւնը (ւ) աւելի փափուկ է հնչւում, քան վեւ (վ) տառը, աչնպէս որ, օրինակ՝ ասւել խօսքը հնչւում է աչնպէս, ինչպէս արտասանում են, երբ գրում է աստել, կտրւելը՝ կտրտել և այլն: Այդ իսկ հիման վերալ մենք սխալ չենք համարում նախկին ուղղագրութիւնը և այդ իսկ պատճառով, մենք թույլ ենք տալիս («Մուրճ»-ի մէջ նաև նախկին ուղղագրութիւնը, եթէ գրողը աչնքան մեծ հաճոյք է զգում վոյի (ո) անմեղ գործածութիւնից, որ աչնպատճառ ուղղում է հին ձևով տպւած տեսնել իւր գրւածքը: Բայց նոյն իսկ հին ձևով գրողներն էլ, որպէս ձեռագիրներից համոզւած ենք, վոյը դէն են գցում, երբ խօսքի մէջ հիւնից (ւ) փտոյ՝ ու բարդ ձայնաւորն է գալիս. օրինակ, նոքա չեն գրում՝ հնչւում, գրուում, բերուում, այլ գրում են՝ հնչւում, գրւում, բերւում, թէպէտ եթէ աչնպէս էլ գրէին, էլի նոյն ձևով պիտի հնչէին: Ակներև է, որ նոքա ևս ընդունում են, որ ուում և տւում միևնույնն է, ուրեմն դորանով իսկ ընդունում են, որ ուել և տել միևնույնն է:

(«Աւ») վերջաւորութիւնը աչն բապերի անցեալ եղանակի մէջ (ասւեցաւ, կարգադրւեցաւ և այլն), որտեղ նա միմիայն մի աւելորդ ձայն է, մենք զէն ենք գցում, որովհետև նա մի մնացորդ է գրաբարից բաց մի մնացորդ, որը ոչնչով չէ արգարացնում իւր գոյութիւնը, բացի նորանից, որ երկարացնում է բառը. իսկ այդ ոչ ոքին օգուտ չէ՝ ոչ խօսողին՝ որ ժամակորոյս է լինում, ոչ գրողին՝ որ բոլորովին աւելորդ ժամանակ և թուղթ ու թանաք է վատնում, ոչ էլ, վերջապէս, հրատարակչին, որը գուցէ այդ բոլոր աւելորդ բաների համար փող է վճարում: («Աւ») վերջաւորութիւնը պէտք է պահպանենք միմիայն աչնտեղ, որտեղ նա հարկաւոր է, առանց որի անկարելի է ցանկացած միտքը լստնել, օրինակ՝ կալացաւ, եկաւ, հասաւ, վերջացաւ, տարաւ, կորաւ և այլ բապերի մէջ:

Ազգերի անունները, երբ սոքա եղակի ուղղական հոլովում ինի

(ի) տառով են վերջանում, լողնականում ընդունում են քէ (ք). ժողովուրդը չի ասում՝ Երևանցիներ, Ղարաբաղցիներ, Թիֆլիսցիներ, այլ ասում է Երևանցիք, Ղարաբաղցիք, Թիֆլիսցիք. սեռականում ժողովուրդը ասում է՝ Երևանցոց, Ղարաբաղցոց, Թիֆլիսցոց և այլն: Նոյն համեմատություններ՝ ժողովուրդը և գրողներից շատ շատերը ասում են և գրում՝ Ֆրանսիացիք, Իտալացիք, Գերմանացիք, Ֆրանսիացոց, Իտալացոց, Գերմանացոց, առանց ուղենալու դորանով գրաբարին հետևել: Մենք էլ կը հետևենք ժողովրդին:

Պ. ԳԱՐՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ԹԱՏԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

25-ամեայ յօժելեանը:

1863 թ. հոկտեմբեր ամսի 22-ին խաղացւեց բեմի վերայ Գաբրիէլ Սունդուկեանցի առաջին թատերական գրածքը՝ «Գիշերաւան սարբը խէրէն»։ Այդ պատճառով 1888 թ. հոկտեմբերի 22-ին լրացաւ նորա թատերական գործունէութեան 25-րորդ տարեշրջանը: Բայց պատահեց, որ հալ գրականութեան և թատրոնի համար ալդ նշանաւոր օրը հաշիւ չէր առնած հալ հասարակութիւնից և ալդ համակրելի ջօքէլեանը տօնելու համար առաջուց ոչինչ պատրաստութիւն չէր տեսնւած: Բայց պէտք է հրապարակով և բարձրագոյ կերպով վկայել, որ ալդ մոռացումը հետեանք չէ հասարակութեան սառնասրտութեան՝ ո՛չ դէպի հակական թատրոնի գործը ընդհանրապէս և ո՛չ դէպի բազմավաստակ ջօքէլեարի անձնաւորութիւնը մասնաւորապէս: Սա մի հաստատ իրողութիւն է, որ 25 տարւալ լրանալը հոկտեմբերի 22-ին մոռացել էր թատրոնական գործին ընդհանրապէս և պ. Գ. Սունդուկեանցին անձնապէս ալնքան մօտիկ մի մարդ, որպիսին է պ. Գէորդ Չմշկեանը: Դա մի ապացուց է, որ ջօքէլեանը իւր ժամանակին չը տօնելու պատճառը կամ ալլապէս մոռացումը չը պիտի վերադրել ուրիշ հանգամանքին, ալլ միայն հասարակ պատահմունքին:

Յօքէլեանը տօնելու խնդիրը ծագեց ալն րոպէից, երբ պ. Գ. Չմշկեանը իմացաւ ալդ և երբ նա գործի էութիւնը հաղորդեց Թիֆլիսի Հայոց Դրամատիկական ակումբի անդամներից՝ Իշխ. Ամատունուն, պ. Արգար Յովհաննիսեանին և ուրիշներին:

Յալունի է, որ Հայոց Դրամատիկական ակումբը իւր նոյեմբ. նիստում յճուեց տօնել ալդ ջօքէլեանը դեկտեմբերի 22-ին, որ օրը և պիտի ներկայացւէր քաղաքալին թատրոնում պ. ջօքէլեարի նոր աւարտած «Ամուսիններ» պիեսը. ջալունի է նոյնպէս, որ պ. Գ. Սունդուկեանցը հրապարակական մի նամակով, որ տալեց տեղական հայոց թերթերում, հրաժարւեց

տօնելու պատուից, Ալդ ճամակը ընդհանրապէս լաւ չը հասկացւեց հասարակութիւնից. բայց և այնպէս լօբէլիանը տօնելու խնդիրը թւեց ամենքին արդէն լուծւած, վերջացած և, ի հարկէ, բացասական մտքով, այն է՝ որ նա չը պիտի տօնէր: Շատերը պ. Գ. Սունդուկեանցի մերժումը՝ ակումբի հրաւերքը ընդունել — վերագրեցին թիւրիմացութիւնների, որ կարող էին տեղի ունեցած լինել պ. Սունդուկեանցի և Դրամատիկական ակումբի մէջ:

Խնդիրը արդարևով վճռած էր համարւում, երբ մի հանդամանք կրկին ստիպեց օրւալ խնդիր շինել պ. Սունդուկեանցի լօբէլիանը: Հանգամանքը սա էր, որ համալսարանների հալ ուսանողութիւնը, դեկտեմբերի 22-ին լօբէլիանի տօնելը վճռած՝ գործ համարելով, պատրաստութիւններ էին տեսել ուղերձներ ուղղելու և այլօմներ մատուցանելու պ. Սունդուկեանցին և այլ մտքով շտապել էին իրանց կողմից ներկայացուցիչներ ընտրել լօբէլիանի օրւալ համար: Ամենաառաջինը համալսարանական ուսանողութիւնից, որ այդ բանի համար կարգադրութիւն էր արել, Օդեսսայի ուսանողներն էին, որոնցից 11 դեկտեմ. ստացւած հեռագրի առիթով կապեցաւ մի մասնաւոր ժողով («Մուրճ»)-ի խմբադրատանը, որին հրաւիրւած էր և պ. Գ. Չմշկեանը: Այդ մասնաւոր ժողովի մէջ վճռեց պ. Սունդուկեանցի թատերագրութեան 25-ամեայ լօբէլիանը կրկին բաց խնդիր լստարարել, վճռեց նաև մեծապատիւ պ. լօբէլիարին այդ մասին իմաց տալ և նորա հաւանութիւնը ձեռք բերել: Այդ փափուկ լանձնարարութիւնը իւր վերալ առաւ պ. Չմշկեանը, որի գործը մի քանի օրով ուշացաւ այն դառնադէտ կորուստների պատճառով, որոնց ենթարկեց այդ խոշոր խնդիրներին սրտով և անձնապէս այնքան մօտիկ պ. Արգար Յովհաննիսեանի ընտանիքը, որի սուգը ընդհանուր սուգով համակեց թիֆլիսի հասարակութեան մի սուլար մասը, մասնաւորապէս զրականութեան և թատրոնին մօտ մարդկանց շատ շատերի սրտերը: Այդ դէպքի պատճառով խնդիրը մի առժամանակ մնաց, բայց միմիայն այն նպատակով, որ սկսած պատրաստութիւնները շարունակեն: Այդ միջոցում ստացւեց նաև Պետերբուրգի հալ ինտելլիգէնցիալից ուղարկած ուղերձը, որի ներկայ ցուցիչ խնդրւած է լինել պ. Ալէքսանդր Քալանթարը, որպէս ստացւեց Օդեսսայի հալ ուսանողների այլօմը ուղերձով հանդերձ, որը պիտի մատչեանէ պ. լօբէլիարին նոցա ներկայացուցիչ («Մուրճ»)-ի խմբագիրը: Նոյն Պետերբուրգի ուսանողութիւնից ստացած է այլօմ պ. Կ. Նաղուբեանը, իբր ներկայացուցիչ:

ԿՈՎԿԱՍՏԱՆ ԱՐԴԻԻՆԱՀԱՆԴԵՍ ԹԻՖԼԻՍՈՒՄ 1889 թ.

Ներկայ 1889 թւականի սեպտեմբեր ամսում թիֆլիսում բացւելու է Կովկասեան երկրի բոլոր արդիւնքների մի հանդէս, ըստ օրինակի այն

հանդէսներին, որոնք սովորական են դառած Եւրոպայի բառաջադէմ երկիր-
ներում:

1889 թւականի արդիւնահանդիսի գաղափարը ծնած է Կովկասեան
Գիւղատնտեսական Ընկերութեան մէջ՝ դեռ ևս 1887 թւականին, երբ, ընկե-
րութեան խորհրդի հրաւերքով, ընկերութեան անդամ պ. Վիկտոր Դին-
գելտեդ ղեկուցում կարգաց աղէ խնդրի մասին, առաջարկելով միանգա-
մայն, որ աղէ հանդէսը տեղի ունենար 1888 թւականին՝ Թադաւոր Կալսեր
Կովկասը ալցելելու առիթով: Գլխաւորապէս ֆինանսական դժարութիւն-
ների պատճառով, աղէ խնդիրը փտածգւեց, մինչև որ 1888 թւի վերջը
նա բաւարար լուծում ստացաւ, երբ գիւղատնտեսական ընկերութիւնը
ձեռք բերեց Տէրութեան գանձարանի և Թիֆլիսի քաղաքային վարչութեան
դրամական աջակցութեան երաշխաւորութիւնը:

1889 թւականի Կովկասեան արդիւնահանդէսը անքան կէտերով շո-
շափում է մեր երկրի ամբողջ ազգաբնակչութեան և աշխատաւոր բոլոր
դասակարգերի շահերը, որ մենք պարտք ենք համարում երկրիս բոլոր ազգա-
բնակչութեան, բաց մանաւանդ մեր երկրի բոլոր հայերին յորդորել, որ դէպի
աղէ հանդէսը վերադրեն ամենալն լուրջ մտութեամբ: Աղէ հանդէսը պիտի
երևան հանէ ոչ միայն այն, ինչ արդիւնաբերութիւն է մեր երկիրը
առհասարակ, այլ և այն, թէ աղէ արդիւնաբերութեան զործում ո՞ր ազգերը
ո՞րքանով են մասնակցում: Ահա մի երևելի առիթ՝ ցոյց տալու ամբողջ
Ռուսաստանին, թէ ինչ է Հայը Կովկասի արդիւնագործութեան մէջ, նշա-
նաւոր և հաղապարտ առիթ՝ ցոյց տալու ոչ թէ խօսքով և վիճելի կար-
ծիքներով, այլ իր ապէս, դրական ապէս, որ Հայը ոչ միայն դիտէ
առևտուր անել, այլ և հող մշակել, երկիր կանաչեցնել, արդիւնք ստեղծել,
արհեստ զարգացնել, բան սովորել և բան սովորեցնել, օրինակ առնել և օ-
րինակ տալ: Մենք անասելի հաճուք կը զգանք, եթէ հայը աղէ մի կալանի
մտքով միջադպային մրցութեան դաշտից դուրս գալ այն պատուով, որին
արժանի են կացույցանում նորա համբաւաւոր աշխատասիրութիւնը և ա-
ռաջդիմութեան սէրը, բաց որը, ո՞ւր է չէ կալանի, ժխտում է նոյն իսկ
այն մարդկանցից, որոնք առաջինը պիտի լինէին այն հռչակելու: Հանդէ-
սը, սակայն, միմիայն նորա համար չէ, որ անտեղ ցոյց տան ունեցածը,
այլ և նորա համար է, որ տեսնեն նաև ուրիշներին դործածը և առելի լաւից
օրինակ առնեն:

«Մուրճ»-ը իւր կողմից կ'անէ, ինչ կարելի է մի ամապրի՝ յորդորել
ժողովրդին, ծանօթացնել նորան հանդիսին մասնակցելու բոլոր պայման-
ների հետ, օգնել նորան խորհուրդներով, և այլն: Այլ պատճառով մինք
կ'աշխատենք իւր ժամանակին միշտ հաղորդել ինչ կը վերաբերի աղէ
հանդիսին և, աղէ նշաւտակի համար, «Մուրճին» մէջ պիտի բացենք մի ա-
ռանձին բաժին արդիւնահանդիսին վերաբերեալ: